ԿԱՐԾԻՔ

Տարոն Արամի Սաքոյանի «Հայաստանի գործոնը ռուս-թուրքական հարաբերությունների համատեքստում 1991-2015 թթ.» վերնագրով թեկնածուական ատենախոսության վերաբերյալ

Մասնագիտական և քաղաքական շրջանակներում վաղուց արդեն ամրագրված փաստ է, որ դարեր շարունակ ռուս-թուրքական բազմաշերտ և հակասական հարաբերություններում հայկական գործոնը որոշակի դեր է ունեցել և ունի: Հայաստանի անկախության վերականգնումից հետո հայկական գործոնին ավելացավ նաև հայաստանյան գործոնը և այդ խնդրի ուսումնասիրությունն իրոք ունի գիտական և քաղաքական կարևորություն: Տարոն Սաքոյանի թեկնածուական ատենախոսության թեման նվիրված է այժմ ավելի քան արդիական այդ խնդրի ուսումնասիրությանը:

Ներկայացվող ատենախոսությունն հասուն գիտական աշխատանք է, ունի տրամաբանական կուռ կառուցվածք և հարուստ է հիմնավորված եզրահանգումներով: Ատենախոսին հաջողվել է տալ խնդրի և՛ ընդհանուր համապատկերը, և՛ դետալային վերլուծություն անել ընդ որում ներառելով նորույթ պարունակող որոշ հարցեր. օրինակ՝ ռուս-ուկրաինական ճգնաժամի ազդեցությունը թուրք-ռուսական հարաբերությունների վրա: Հմտորեն տրված են նաև տարածաշրջանային ընդհանուր զարգացումների ընթացքը և տրամաբանությունը: Աշխատանքի կիրառական նշանակության մասին խոսելիս՝ պետք է չհամաձայնվեմ ատենախոսի հետ, ով թերևս համեստաբար կարծում է, որ այն կարող է օգտակար լինել միայն ռազմաուսումնական հաստատությունների համար, այնինչ ատենախոսության առանձին հատվածներ կարող են օգտագործվել ավելի լայն՝ ընդհանուր բուհական համակարգում, մասնագիտական ֆակուլտետներում:

Ատենախոսը իրավացիորեն շեշտում է Հայաստանի ունեցած բացառիկ դերակատարումը տարածաշրջանային անվտանգության և Թուրքիայի նկրտումների ու հավակնությունների սահմանափակման հարցում: Կարևոր հարցերի թվում հանգամանալից քննարկվում և ներկայացվում են նաև տարբեր մասնագետների կարծիքներ Հայաստանին ճնշելու և մեկուսացնելու ադրբեջանական հետևողական քաղաքականության վերաբերյալ, որի համապատկերում տրվում է Ռուսաստանի դերը, նրա ազդեցության նվազեցմանը միտված թուրք-ադրբեջանական ջանքերը: Ատենախոսի կողմից ճշգրիտ կերպով առանձնացվում և շեշտվում է ՀՀ Անկախության հռչակագրի

ունեցած կարևոր և բարդույթային դերը թուրքական քաղաքական համակարգում և մտածողության մեջ:

Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից՝ համապատասխան ենթագլուխներով, եզրակացություններից և օգտագործված աղբյուրների ու գրականության ցանկից:

Ներածության մեջ հիմնավորվում են թեմայի արդիականությունը, նորույթը, սահմանվում են նպատակները, խնդիրները, տրվում է օգտագործված աղբյուրների և գրականության տեսությունը: Առաջին գլխում հանգամանալից կերպով ներկայացվում են ռուս-թուրքական հարաբերությունները 1990-ականներին, ձևավորվող հավասարակշռման մեթոդները և հատկապես Թուրքիայի կողմից դրանց հանդեպ հետևողական քայլերի նախապատրաստումը: Այս գլխում բնականաբար հատուկ ուշադրություն է դարձվում ռուս-թուրքական հարաբերություններում Հայաստանի և Արցախյան պատերազմի ունեցած ազդեցությանը: Երկրորդ գլուխն արդեն նվիրված է ռուս-թուրքական հարաբերությունների փոխակերպման միտումներին և դրանցում Հայաստանի դերակատարմանը, հատուկ անդրադարձ է արվում 2008 թ. ռուս-վրացական օգոստոսյան պատերազմին ու դրա ունեցած հետևանքներին: Երրորդ գլխում քննվում է Հայաստանի դերը ռուս-թուրքական հարաբերություններում արդեն տարածաշրջանային և միջազգային հարաբերությունների քննության համապատկերում, առանձնացվում են սիրիական և ուկրաինական ճգնաժամերը:

Վերջում տրված են աշխատանքից բխող եզարկացություններ, որոնց մեջ հատկապես կարևորում ենք այն թեզը, որ 2015 թ. Սիրիայում ռուս-թուրքական ճգնաժամը էական և բացասական դեր խաղաց Հայաստանի անվտանգային փխրուն միջավայրի խարխլման կամ ինչպես ցույց տվեցին հետագա իրադարձությունները՝ փլուզման համար: Այս նույն համապատկերում ճիշտ է ատենախոսի կողմից «Աստանայի ձևաչափի» կարևորումը, որը ներկայումս տեղափոխվել է նաև Հարավային Կովկաս:

Աշխատանքն իրականացվել է հայերեն, ռուսերեն, թուրքերեն և անգլերեն աղբյուրների, արխիվային նյութերի, գիտական ուսումնասիրությունների, մամուլի հրապարակումների հիման վրա:

Դրական գնահատելով արված աշխատանքը՝ նպատակահարմար ենք գտնում ատենախոսության հետ կապված անել որոշ դիտարկումներ և առաջարկություններ.

1. Չնայած որ անդրադառնալով թուրք հեղինակներ Սայընի և Դողանի այն մտքին, թե Թուրքիան հանրապետության հռչակումից հետո որևէ

պատերազմի չի մասնակցել՝ ատենախոսը այն բնութագրում է որպես փաստերի կոպիտ աղավաղում և մի փոքր մանրամասնում խնդիրը տողատակում, սակայն կարծում ենք, որ դա բավարար չէ: Նախ կարելի էր ավելի ընդգրկուն և փաստերով անդրադառնալ Թուրքիայի ագրեսիվ և ագրեսոր պահվածքին տարբեր տարիներին և տարբեր երկրների հանդեպ: Իսկ ինչ վերաբերվում է 1945 թ. փետրվարին նացիստական Գերմանիային Թուրքիայի կողմից պաշտոնապես պատերազմ հայտարարելուն, ապա դա հայտնի է որպես ֆարս կամ դիվանագիտական կուրյոզ, քանի որ այդ, այսպես կոչված, պատերազմի հայատարարումից հետո որևէ թուրք զինվոր ռազմաճակատ չի գնացել և որևէ թուրքական զենք չի կրակել, ուստի կարծում ենք, որ դա այնքան էլ հաջող ընտրված օրինակ չէ վերոհիշյալ թուրք գիտնականների թեզը հերքելու համար:

2. Տեքստում երբեմն հանդիպում են փոքր ինչ պարզունակ են թվացող հետևյալ ձևակերպումները. «Թուրքիայի համար ակնհայտ դարձավ, որ տարածաշրջանում հիմնական հեգեմոն դերակատարը Ռուսաստանն է» կամ «Անկարայի համար պարզ դարձավ, որ խնդրի լուծման «բանալին» Ռուսաստանի ձեռքում է» /էջ 75/: Առաջարկում եմ դրանք շտկել աշխատանքը հրատարակության պատրաստելու պարագայում:

3. Գրականության տեսության մեջ երբեմն չի պահպանվել ժամանակագրական բաժանումը և բացի այդ, երբեմն օգտագործվել են հրապարակախոսական կամ լրագրողական նյութեր, որոնք թվարկվում են ակադեմիական լուրջ աշխատանքների կողքին առանց տարանջատման /էջ 10-11/:

4. Ատենախոսության մեջ նկատվում են որոշ կրկնություններ, նույն մտքերի կիրառում, որոնք ոչ միշտ են նպաստում շարադրանքի տրամաբանական շղթայի պահպանմանը. օրինակ՝ էջ 72, 73: Կիրառվել են որոշ արհեստածին բառեր և ընդ որում ոչ եզակի անգամ, օրինակ՝ անջատամետ, անվտանգակենտրոն, հակամարտահամագործակցային:

5. Խոսվում է ռուսական ինքնաթիռի 2015 թ. Թուրքիայի կողմից խոցելուց հետո ռուս-թուրքական ճգնաժամի մասին և այն, որ 2016 թ. Թուրքիան ցավակցեց Ռուսաստանին և ներողություն խնդրեց, սակայն չի նշվում այն կարևոր փաստը, որ թուրքական ուղերձում կիրառվել էր ներողություն բառի

ամենակենցաղային տարբերակը, որը թուրքական հասարակության կողմից չընդունվեց որպես հետքայլ կամ զղջում:

Նշված դիտարկումները ամենևին չեն ստվերում արված աշխատանքը, այն կատարված է պատշաճ մակարդակով, ունի արդիական գիտական նշանակություն և պարունակում է նորույթ: Մեղմագրում արտացոլված են ատենախոսության ընդհանուր դրույթները և եզրակացությունները, իսկ տպագրված հոդվածներում քննության են առնված թեմայի առանձին խնդիրներ: Ուստի, հաշվի առնելով վերոնշյալը՝ կարծում ենք, որ Տարոն Արամի Սաքոյանի «Հայաստանի գործոնը ռուս-թուրքական հարաբերությունների համատեքստում 1991-2015 թթ.» վերնագրով թեկնածուական ատենախոսությունը համապատասխանում է ՀՀ ԲՈԿ-ի սահմանած չափորոշիչներին, իսկ հեղինակը արժանի է իր հայցած պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանին Է. 00.02 «Համաշխարհային պատմություն» մասնագիտությամբ:

Պաշտոնական ընդդիմախոս՝
պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
Ռուբեն Հովհաննեսի Մելքոնյան

Ռուբեն Մելքոնյանի ստորագրությունը հաստատում եմ
ԵՊՀ գիտական քարտուղար՝ բ.գ.թ. Մ. Հովհաննիսյան

15.12.2022